ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2013թ. **N –Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ավագանու մարմիններն են՝ Քաղաքապետը, նրա առաջին տեղակալը, Ավագանու անդամները և Ավագանու հանձնաժողովները:».

2) 4-րդ կետը «Ավագանիում ստեղծվում են խմբակցություններ» բառերից հետո լրացնել /այսուհետ՝ Խմբակցություններ/ բառերը.

3) 7-րդ կետը «ինչպես նաև իր մարմինների» բառերից հետո լրացնել « և Խմբակցությունների» բառերը:

4) 13-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ **3.1-րդ**, 5.1-րդ, 12.1-րդ 14.1-րդ, **42.1-րդ**, 51.1-րդ և 51.2-րդ ենթակետերով.

«3.1) Վերահսկողություն է իրականացնում Քաղաքապետի գործունեության, ինչպես նաև իր որոշումների կատարման նկատմամբ.».

«5.1) Քաղաքապետի ներկայացմամբ սահմանում է քաղաքապետի խորհրդականների և օգնականների թվաքանակը.».

«12.1) քննարկում և որոշում է կայացնում Քաղաքապետին կից, Երևանի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու մասին.».

«14.1) սահմանում է Երևանի խորհրդանիշերի՝ զինանշանի և դրոշի նկարագրությունը, Երևանի օրհներգը, ինչպես նաև Ավագանու, Քաղաքապետի, Երևանի ենթակայության կազմակերպությունների կողմից Երևանի խորհրդանիշերի պարտադիր օգտագործման այլ դեպքերը և կարգը.».

«42.1) Որոշում է ընդունում նշանավոր մարդկանց հիշատակը հավերժացնող հուշարձանների իրականացմանը համաձայնություն տալու վերաբերյալ.».

«51.1) քննարկում է Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության և այլ իրավասու պետական մարմինների իրականացրած ստուգումների արդյունքները և իր իրավասության շրջանակում դրանց վերաբերյալ ընդունում է որոշում.».

«51.2) քննարկում և որոշում է կայացնում Երևանում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.».

5) 13-րդ կետի 6-րդ ենթակետը «քաղաքապետի տեղակալների» բառերից հետո լրացնել «Երևանի գլխավոր ճարտարապետի» բառերով.

6) 40-րդ ենթակետը շարադրել հոտևյալ խմբագրությամբ.

«40) Ավագանու հերթական նիստում՝ Ավագանու անդամների առնվազվ մեկ երրորդի պահանջով, կարող են անցկացվել հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկումներ.».:

7) 20-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Քաղաքապետը ներկայացված իրավական ակտի նախագիծը կարող է չընդգրկել Ավագանու նիստի օրակարգ, եթե Հանձնաժողովներից ստացված կարծիքներով կամ Ավագանու անդամների առաջարկներով հիմնավորվում է, որ նշված իրավական ակտի ընդունումը դուրս է Ավագանու իրավասությունից: Այդ մասին Քաղաքապետը եռօրյա ժամկետում տեղեկացնում է նախաձեռնության հեղինակին:»:

8) 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«21.Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը՝ նախաձեռնությունները ստանալուց հետո ոչ ուշ, քան հաջորդ օրը, քննարկման նպատակով դրանք տրամադրում է Խմբակցություններին, Ավագանու անդամներին, Ավագանու մշտական հանձնաժողովների կազմից Քաղաքապետի նշանակած գլխադասային և մյուս հանձնաժողովներին: Գլխադասային հանձնաժողով նշանակվում է Ավագանու այն մշտական հանձնաժողովը, որի իրավասության մեջ է մտնում Իրավական ակտի նախագծով ներկայացված հարցի քննարկումը: Գլխադասային հանձնաժողովը և Քաղաքապետը նախաձեռնությունը ստանալուց հետո ոչ ուշ քան Ավագանու հերթական նիստից առնվազն տասն օր առաջ Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին են ներկայացնում նախաձեռնության վերաբերյալ իրենց եզրակացությունները: Նույն ժամկետում նախաձեռնությունների վերաբերյալ **առաջարկություններ և կարծիքներ** կարող են ներկայացնել նաև Ավագանու անդամները և Ավագանու մյուս հանձնաժողովները:»:

9) Լրացնել 22.1 կետով՝ շարադրելով հետևյալ բովանդակությամբ.

«22.1. Նախաձեռնության հեղինակի կողմից ստացված Իրավական ակտի նախագիծը, կից փաստաթղթերը, գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը և տեղեկանք-ամփոփաթերթը քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, մեկ օրվա ընթացքում ներկայացնում է Քաղաքապետին՝ հերթական նիստի օրակարգում ընդգրկելու համար:»:

10) 23-րդ կետում «նույն օրն» բառերը փոխարինել «Մեկ օրվա ընթացքում» բառերով, իսկ «երկու օր» բառերը»՝ «երեք օր» բառերով։»։

11) Լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 23.1-րդ կետով.

«23.1. Նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված Իրավական ակտերի նախագծերը, դրանց կցված փաստաթղթերը, տեղեկանք-ամփոփաթերթը և գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը՝ հերթական նիստը սկսվելուց առնվազն մեկ շաբաթ առաջ տրամադրվում է ավագանու անդամներին: Մինչև հերթական նիստի օրակարգ ընդգրկվելը Իրավական ակտի նախագծի հեղինակի պահանջով այն կարող է հանվել շրջանառությունից: ».

12) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 24.1-րդ կետով.

«24.1. Կանոնակարգի 21-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերում նշված Իրավական ակտի նախագիծը և փաստաթղթերը, Խմբակցություններին, ավագանու անդամներին և հանձնաժողովներին տրամադրվում են Ավագանու նստավայրում՝ թղթային տարբերակով առձեռն կամ էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու միջոցով։».

13) Լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 24.2-րդ կետով.

«24.2. Իրավական ակտի նախագիծը քննարկման ցանկացած փուլում, սակայն մինչ Ավագանու նիստում քվեարկության անցկացումը, հեղինակի պահանջով հանվում է շրջանառությունից։»։

14) 26-րդ կետը «համացանցային կայքում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում։».

15) 35-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ, 4.2-րդ և 4.3-րդ ենթակետերով.

«4.1. պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, համայնքի ընտրողներին տեղեկացնել համայնքի ավագանու աշխատանքների մասին.».

«4.2. օժանդակել համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանը.».

«4.3. ստորագրել իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերը»:

16) 35-րդ կետի 4-րդ ենթակետը լրացնել հետևյալ բառերով.

«հակառակ դեպքում՝ նրա քվեարկությունը ճանաչվում է անվավեր:»:

17) Լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 36.1-րդ կետով.

«36.1. Ավագանու անդամին իր լիազորությունների ժամկետով տրվում է Ավագանու անդամի վկայական:».

18) 40-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

19) 41-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«41. Կանոնակարգի 39-րդ կետում նախատեսված դեպքերում Ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Ավագանու որոշմամբ: Նիստ գումարելու անհնարինության դեպքում Ավագանու անդամները կազմում են Ավագանու անդամի լիազորությունների դադարեցման մասին արձանագրություն, բացառությամբ կանոնակարգի 39-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված դեպքի:».

20) 49-րդ կետը «առանձին աշխատասենյակներով» բառերից հետո լրացնել «Երևանի իրավական ակտերի տեղեկագրով և օրաթերթերով :» բառերով:

21) 53-րդ կետը «անունից» բառից հետո լրացնել «իրենց իրավասություններին վերապահված հարցերով, Քաղաքապետի գործունեության և Ավագանու որոշումների կատարման նկատմամբ» բառերով:

22) 55-րդ կետում «անդամներ չեն հանդիսանում բառերը փոխարինել «կազմում չեն ընդգրկվում» բառերով:

23) 56-րդ կետը «բացման օրը» բառերից հետո լրացնել «Օրենքով սահմանված կարգով» բառերով, իսկ շարունակությունը, ինչպես նաև 57-58 կետերը հանել։

24) 62-րդ կետը «կանոնակարգը» բառից հետո լրացնել «և իր անվամբ՝ սահմանված նմուշի ձևաթուղթ» բառերով։

25) **64-րդ կետը լրացնել «իսկ նստաշրջանների միջակայքում՝ ըստ անհրաժեշտության» բառերով։**

26) 69-րդ և 70-րդ կետերը «Հանձնաժողովի» բառից հետո լրացնել «հերթական» բառերը։

27) 77-րդ կետը լրացնել.

ա. «գումարվում է» բառից հետո՝ «անհետաձգելի քննարկում և որոշման ընդունում պահանջող հարցերի առկայության դեպքում» բառերով,

բ. «ժամկետում» բառից հետո «և օրակարգով, ինչպես նստաշրջանների ընթացքում, այնպես էլ՝ նստաշրջաններից դուրս» բառերով,

գ. հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Արտահերթ նիստի հրավիրման և անցկացման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կանոնակարգով, իսկ հարցերը քննարկվում են սույն կանոնակարգի 70-74 կետերով նախատեսված ընթացակարգով, սակայն նախաձեռնողի սահմանած օրակարգով։»։

28) 81-րդ կետի 3-րդ ենթակետը «նիստի» բառից առաջ լրացնել «հերթական» բառով, իսկ 4-րդ ենթակետում «կարծիքը և /կամ/ եզրակացությունը» բառերը փոխարինել «որոշումները և գրությունները» բառերով.

29) **83-րդ կետում «Հանձնաժողովների նախագահները» բառերը փոխարինել «Երևանի աշխատակազմի քարտուղարը» բառերով։**

30) 87-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ավագանին ժամանակավոր հանձնաժողով ստեղծելիս սահմանում է նրա խնդիրները, լիազորությունները, գործունեության կարգը և ժամկետները, նշանակում հանձնաժողովի նախագահ և անդամներ: Ժամանակավոր հանձանաժողովը կազմված է Խմբակցությունների հավասար թվով ներկայացուցիչներից: Ավագանու որոշմամբ ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքներին կարող ներգրավվել փորձագետներ:»:

31) Լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 89.1-րդ կետով.

«89.1. Քննող հանձնաժողովը ստեղծվում է Ավագանու որոշմամբ, որով սահմանվում է հանձնաժողովի կազմը, այդ թվում՝ խնդիրները, լիազորությունները և գործունեության ժամկետը:»:

32) **103-րդ կետը «առնվազն մեկ» բառերից հետո լրացնել «հերթական» բառով:**

33) **104-րդ կետում.**

ա. **«այդ մասին կայացնելով համապատասխան որոշում» բառերը հանել**

բ. լրացնել հետևյալ բավանդակությամբ՝ նոր նախադասությամբ.

«Օրենքով ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին, ինչպես նաև տոների և հիշատակի օրերի հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տեղափոխված ոչ աշխատանքային օրերին հերթական նիստեր չեն անցկացվում:»:

34) 114-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերը <օրակարգի> բառից առաջ լրացնել «հերթական նիստի» բառերը:

35) 114-րդ կետի 6-րդ ենթակետի առաջին նախադասությունում <գլխադասային հանձնաժողովի և Քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ» բառերը փոխարինել «, գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը, Քաղաքապետը կամ նրա ներկայացուցիչը:»:

36) 114-րդ կետի 8-րդ ենթակետի երկրորդ նախադասությունը «երկուական բոպե» բառերից հետո լրացնել «, իսկ պատասխանի համար մինչև 5 բոպե.» բառերով.

37) Ուժը կորցրած ճանաչել 114-րդ կետի 15-րդ ենթակետը:

38) **114-րդ կետը լրացնել 18.1 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.**

«18.1) Մինչև քվերակության անցկացումը, խմբակցությունը կամ Ավագանու անդամը կարող են հանդես գալ հարցի քվեարկությանը մասնակցելուց հրաժարվելու մասին հայտարարությամբ:»:

39) 115-րդ կետում «Եթե ձևաթուղթը ստացման պահից երկու օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Եթե ձևաթուղթը ստացման պահից 48 ժամվա ընթացքում» բառերով.

40) 116-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«116. Ավագանու արտահերթ նիստը անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում, սակայն նախաձեռնությունից ոչ շուտ, քան երեք օրից: Արտահերթ նիստեր կարող են գումարվել նաև հերթական նստաշրջաններից դուրս:»:

41) 117-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«117. Արտահերթ նիստի օրակարգը, դրանում ընդգրկված Իրավական ակտերի նախագծերը և դրանց կցված փաստաթղթերը Խմբակցություններին, Ավագանու անդամներին, Քաղաքապետի նշանակած գլխադասային հանձնաժողովին և մյուս հանձնաժողովներին տրամադրվում են արտահերթ նիստը նախաձեռնելուց հետո ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում: Նույն ժամկետում այդ նյութերը պետք է տեղադրվեն Երևանի պաշտոնական համացանցային կայքում:

Գլխադասային հանձնաժողովը արտահերթ նիստը սկսելուց ոչ ուշ, քան 1 ժամ առաջ ներկայացնում է իրավական ակտի նախագծի վերաբերյալ իր եզրակացությունը:»:

42) 141-րդ կետը «մյուս Հանձնաժողովների» բառերից հետո լրացնել «և Խմբակցությունների» բառերով:

43) Լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 157-րդ կետով.

«157. Երևանի զարգացման քառամյա ծրագրի և /կամ/ տարեկան բյուջեի կառավարման /կազմման, հանրային քննարկման, իրականացման /կատարման/ և վերահսկման/ գործընթացներում Երևանի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար, Քաղաքապետի առաջարկությամբ և Ավագանու որոշմամբ ձևավորվում է Քաղաքապետին կից խորհրդակցական մարմին՝ Քաղաքապետարանի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև Ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ /վերջիններիս համաձայնությամբ/:

44) Լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 158-րդ կետով.

158. Քաղաքապետը մինչև Երևանի զարգացման քառամյա, տարեկան ծրագրի և /կամ/ տարեկան բյուջեի նախագծերը Ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և /կամ/ քննարկումներ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-րդ հոդվածով սահմանված ժամկետում: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ Քաղաքապետը տրամադրում է տեղեկատվություն Ավագանուն:»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ Թ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ /09.08.2013թ. ՀՕ-72-Ն/, ինչպես նաև ավագանու աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու և կանոնակարգի որոշ դրույթներ հստակեցնելու անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ Թ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն առկա չէ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծի ընդունմամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ Թ. ՊՈՂՈՍՅԱՆ